

Քաղաքական ռեաբիլիտացիա

87 տարի առաջ օգոստոսի 10-ին ստորագրվեց Սևրի դաշնագիրը: Կանադայում Հայաստանի նախկին դեսպան, քաղաքագետ Արա Պապյանը վերջին շրջանում թղթապանակից հանել է այն և թափ է տալիս վրայի փոշին: Մեր թղթակիցը հանդիպեց և զրուցեց նրա հետ:

– Ինչու՞ Սևրի դաշնագրի հարցը բարձրացնել հենց այսօր: Կա՞ն լուծման համար աշխարհաքաղաքական նախադրյալներ:

– Ոչ: Պարզապես հարցը լուծելու համար անհրաժեշտ է նախ այն ուսումնասիրել, ստեղծել հասարակական կարծիք, առաջ բերել մտքերի բախում: Առայժմ մենք փորձում ենք այդ անել, քանի դեռ հարցը չի դարձել պետական քաղաքականության առարկա: Ի վերջո մենք 15 տարվա պետություն ենք, և պարտավոր ենք հստակ պատասխանել, թե ո՞րն է Թուրքիայի հետ ունեցած մեր սահմանը, և ո՞ր պայմանագրով է այն ամրագրված: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այն ԽՍՀՄ օրոք ամրագրված սահմանը չէ: Սահմանը ձևավորվել է 1920թ. նոյեմբերի 22-ին ՌԷ. Վիլսոնի իրավարար վճռի արդյունքում, որը և ուժի մեջ է առ այսօր:

– Դուք ինչպե՞ս եք պատկերացնում հարցի լուծումը:

– Պետք չէ մտածել, թե վաղը հողային պահանջ ենք դնելու Թուրքիայի առջև: Հարցը լուծվելու է մի շարք փուլերով: Այս փուլում մենք պարզապես վերահաստատում ենք մեր իրավունքները այդ տարածքների վրա: ՄԱԿ-ի կանոնադրության 34-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան, որպես անդամ երկիր կարող ենք հարցը բարձրացնել Անվտանգության խորհրդում, կամ այն քննության ենթարկել ՄԱԿ-ի միջազգային դատարանում: Եթե այդ ատյանները հաստատեցին մեր իրավունքները, ապա կարող է ապաշրջափակվել մեր երկիրը, կունենանք բաց սահմաններ, ելք՝ դեպի ծով, նավահանգիստներ օգտագործելու հնարավորություններ, ձեռք կբերենք տնտեսության զարգացման նորանոր ուղիներ: Եվ ամենակարևորը՝ այդ տարածքները կապառազմականացվեն: Թուրքիան պարտավորված կզգա դուրս բերել իր զորքերը: Խնդիր չի դրվում, որ թուրքերն ու քրդերը այդտեղից հեռանան: 20-րդ դարում հարցը նման ձևով չի լուծվում: Պարզապես կարելի է միջպետական համաձայնագրով ամրագրել, որպեսզի տարածքներն օգտագործելու դիմաց Թուրքիան կատարի որոշակի վճարումներ: Եթե չկարողանանք այս տարբերակին հասնել, ապա գոնե կկարողանանք մենք ևս օգտագործել դրանք:

– Հարցի լուծման հիմքում ինչպիսի՞ փաստարկներ ենք դնում՝ իրավակա՞ն, պատմակա՞ն, քաղաքակա՞ն. ի վերջո ոչ մի պետության կողմից չվավերացվեց Սևրի պայմանագիրը:

– Սևրի պայմանագրով չէ, որ գծվում է հայ-թուրքական սահմանը: Հայկական իրավունքները բխում են Ու. Վիլսոնի կողմից կայացված իրավարար վճռից, որը ենթակա չէ փոփոխման: Վիլսոնին ուղղված հայցադիմումը ներառված է պայմանագրի 89-րդ հոդվածում, և այն, ըստ էության, կապ չունի ամբողջ պայմանագրի վավերացված-չվավերացված լինելու հետ: 1920թ. հունվարի 15-ին եվրոպական երկրները ձանաչեցին Հայաստանի անկախությունը հենց այն նպատակով, որպեսզի կարողանա կողմ լինել և ստորագրել պայմանագրի տակ: Սան Ռեմոյում ապրիլի 26-ին երեք մեծ ուժերը՝ Իտալիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան դիմեցին Ու. Վիլսոնին, որպեսզի իրավարար վճռով կատարի Հայաստան-Թուրքիա սահմանագատումը Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգներում: Վիլսոնը սպասեց, որպեսզի Թուրքիան էլ ստորագրի Սևրի պայմանագիրը, այսինքն՝ նա էլ հանդես գա իրավարար վճռի հայցադիմումով, որից հետո նոյեմբերի 22-ին հրապարակեց իր որոշումը: Բայց մինչ նա վճիռը կուղարկեր Փարիզի վեհաժողովին, Հայաստանը որպես պետություն այլևս գոյություն չունեց. 11-րդ կարմիր և թուրքական 3-րդ բանակները գրավել էին այն:

– Այն ժամանակ Թուրքիան չապառազմականացվեց ինչ-ինչ պատճառներով, չխորանանք հարցերի մեջ, և հնարավորություն չեղավ Սևրի պայմանագիրը իրականություն դարձնել: Այսօր ի՞նչն է փոխվել:

– Փոխվել է շատ բան. մենք արդեն 20-րդ դարում ենք, այլ են ազդեցության լծակները, միայն ռազմականը չէ, որ գերակայում է: Եվ եթե պետությունը ստանձնում է որոշակի պարտավորություններ, պետք է կատարի: Ի վերջո դու կարող ես չկատարել, բայց այդ դեպքում կհայտնվես մեկուսացման մեջ: Իսկ Թուրքիայի պարագայում նա կարող է այլևս չերազել Եվրամիության մասին:

– Ի՞նչ քաղաքական շահագրգռություն ունեն եվրոպական երկրները, որ այսօր Թուրքիայի հետ նման լեզվով խոսեն:

– Միանշանակ է, որ եվրոպական երկրները չեն ուզում իրենց մեջ տեսնել իսլամացված Թուրքիա: Մինչև Թուրքիան չմեկուսացնեն իսլամական աշխարհից, չփոքրացնեն և չափերով, և բնակչության

թվով, չեն ընդունի իրենց շարքերը: Հակառակ դեպքում եվրոպական պառլամենտում այն կունենա ամենամեծ թվով պատգամավորական խումբը:

Առկա է նաև Ռուսաստանի շահը. եթե մենք ապառազականացնում ենք Թուրքիայի այդ հատվածը, այնտեղ տեղակայվում են դիտորդական առաքելություններ, նշանակում է՝ էապես փոքրանում է Վրաստանի տարածքով Թուրքիայից Հյուսիսային Կովկաս տեղափոխվող գենքի հնարավորությունը, հանգամանք, որը կնպաստի, որպեսզի Ռուսաստանն իր ներկայությունն առավել հեշտությամբ ապահովի տարածաշրջանում:

– Պայմանագրով նախատեսվում էր Թուրքիայի տարածքում ստեղծել և Հայկական պետություն, և Քրդական պետություն: Քրդական հարցի լուծումն ինչպե՞ս եք պատկերացնում այս համատեքստում:

– Վերոնշյալ չորս վիլայեթների վրա պայմանագրով նախատեսվում էր ստեղծել Հայաստան, որի սահմանն էլ պետք է գծեր Վիլսոնը: Իսկ սահմանից հարավ ձևավորվելու էր քրդական ինքնավարությունը: Եվ այսօր քրդերի հավակնություններին էլ պետք է պատասխան տրվի, ասվի նրանց, որ այդ տարածքներին իրավատեր կա: Չեմ ասում պատմական տեր:

– Սա քաղաքական ռոմանտիզմի հերթական դրսևորում չէ՞ մեր կողմից, երբ շատի հետևից ընկնելով, կարող ենք քիչն էլ կորցնել. մենք ունենք Ղարաբաղի հարց, երկրի ապաշրջափակման հարց:

– Ապաշրջափակման համար ահա 15 տարի զանազան առաջարկություններով դիմում ենք Թուրքիային, նա սահմանները չի բացում: Իսկ ինչ վերաբերում է Ղարաբաղին, եթե, Աստված ոչ անի, պատերազմ լինի, ու որպեսզի ստիպված չլինենք երկու ձակատով կռվել, պետք է հենց այս հարցը լուծենք. այսինքն հնարավորություն ունենանք թուրքական զորքը մեր սահմանից ետ տանել:

Կամ Բաքու–Ջեյհան նավթամուղը, Բաքու–Էրզրում գազամուղը, այժմ արդեն՝ Կարս–Ախալքալակ երկաթուղին մեզ համար լուրջ վտանգներ են պարունակում: Դրանք կարող են չեզոքացվել միայն այս ճանապարհով: Անգամ մենք կարող ենք դիմել Բրիտանական տնտեսական դատարան, որպեսզի նավթամուղը շահագործող «Բրիթիշ Պետրոլիում» ընկերությանը պարտադրի տարանցիկ գումարներ վճարել մեր երկրին, քանզի տարածքների մի մասը, որտեղով անցնում է գազամուղը, պատկանում է Հայաստանին, և այդ որոշման տակ ստորագրել է նաև հենց իր երկիրը:

– Սա ձեր անհատական նախաձեռնությունն է, թե քաղաքական այլ ուժեր ևս աջակցում են ձեզ:

– Իմ անհատական նախաձեռնությունն է: Սևրի դաշնագրի հարցով զբաղվել եմ տարիներ շարունակ, բայց, լինելով դեսպան, չէի կարող այդ մասին բարձրաձայնել: Երկու ճանապարհ կար իմ առջև դրված. կամ շարունակում եմ պաշտոնավարել, կամ թողնում եմ աշխատանքս և որպես մասնավոր անձ զբաղվում իմ նախասիրած գործով: Ընտրեցի երկրորդ ճանապարհը: Ես որևէ մեկից որևէ աջակցություն չեմ ստանում, ամբողջ գործն անում եմ իմ ֆինանսական միջոցներով, իմ ժամանակի հաշվին: Ես կապ չունեմ ոչ դրսի ուժերի, ոչ ներսի ուժերի հետ:

Գոհար Սարգսյան

*«Սոբեսեդնիկ Արմենիի» երկշաբաթաթերթ
03 օգոստոսի, 2007թ.*